

ISSN 1829-0531

Խ. ԱՔՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՂԵՍ
№ 2 (36)

ԵՐԵՎԱՆ - 2017

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ
JOURNAL FOR ARMENIAN STUDIES

Հիմնադիր՝

«Երևանի Ն.Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան» պետական ոչ
առևտրային կազմակերպություն 286.210.04777

Խմբագրական խորհուրդ՝

Ռ. Կ. Միրզախանյան (նախագահ),

Մ. Գ. Գիլավյան (գլխավոր խմբագիր),
Ա. Ա. Ավագյան, Ս. Դ. Դանիելյան, Ա. Գ. Դոլոխանյան,
Ա. Կ. Եղիազարյան, Լ. Մ. Խաչատրյան, Ա. Վ. Գալստյան,
Հ. Հ. Հակոբյան, Վ. Գ. Համբարձումյան, Լ. Շ. Հովհաննիսյան,
Ռ. Ռ. Ղազարյան, Է. Ս. Մկրտչյան, Ս. Պ. Մուրադյան,
Ա. Սեփերճյան (Բելյուրոթ), Հ. Նալբանդյան (ԱՄՆ), Մ. Ադամյան (Ֆրանսիա)

Լ. Մ. Ալեքսանյան (պատասխանատու քարտուղար)

Գրանցման վկայական՝ 211.200.00182

Գրանցման տարեթիվը՝ 26.03.2003 թ.

Պարբերականությունը՝ եռամսյա

Ելույթներն ընդունվում են համակարգչային շարվածքով, չեն
վերադարձվում:
Արտատպության դեպքում հղումը «Հայագիտական հանդես»-ին
պարտադիր է:

«Հայագիտական հանդես» ամսագիրն ընդգրկված է թեկնածուական
ատենախոսությունների արդյունքների հրատարակման համար ԲՈՁ-ի
կողմից ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների
ցանկում (12.05.06թ. 133-01):

Մեր հասցեն՝ Երևան, Ալեք Մանուկյան փ. 13, հեռախոս՝ 55-60-30 (1-20)
Էլեկտրոնային փոստ՝ philology@armspu.am

ՄԱՐԿՆԱԼԻ ԿԵՐԴԱՐԸ ԶՈՐՋ ՄՈՒՐԻ
«ՔԻՐԻԹԻ ՀԵՂԵՂԱՏԸ, ՄԻՐՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ՎԵՊՈՒՄ

Բանալի բառեր և արտահայտություններ. Ջորջ Մուր, «Քիրիթի հեղեղատը. սիրիական պատմություն» վեպ, մարգինալի կերպար, Հիսուս, պատում, կրոն, հարություն, Հովսեփ Արիմաթիացի, Պրիատոս:

Ключевые слова и выражения: Джордж Мур, «Ручей Керит. сирийская история», повесть, образ маргинала, Иисус, рассказ, религия, воскресение, Овсеп Ариматнаи, Пилат.

Key words and expressions: George Moore, "The Brook Kerith. a Syrian story" novel, marginal hero, Jesus, narration, religion, resurrection, Joseph of Arimathea, Pilate.

Անգլիական գրականության Վիկտորյան դարաշրջանը (1837-1901), որը բնորոշվում է վիպական ժանրի, հատկապես սոցիալական վեպի անեախաղեպ զարգացմամբ (Չարլզ Դիքենս, Էլիզաբեթ Գաբրելլ, Ռոբերտ Լուիս Սթիվենսոն...), անհնար է պատկերացնել առանց իդալոգի վիպասան, դրամատուրգ, բանաստեղծ և էսսեագիր *Ջորջ Այգուստոս Մուրի* (1852-1933) անվան հիշատակման: Եւ թեև ստեղծագործական կյանքի արշավույթին առավելապես հայտնի էր որպես գոլայական կատարալիզմի ներկայացուցիչ, այնուամենայնիվ գրական զարգացման ճանապարհին վաթսուհինգ ավելին հասնող իր երկերում հնտորեն օգտագործեց կան իրատեսության ու իմպրեսիոնիզմի, սիմվոլիզմի, իսկ վերջում կան միստիցիզմի տարրերը: Այդ ամենի մեջ, անշուշտ, ամենին էլ հետին դեր չեն խաղացել գրողի կրոնական հայացքները:

Ջորջ Մուրի գրական ժառանգության ուսումնասիրման խնդրում առանձնակի ուշադրություն է գրավում հենց այն գաղափարական փոփոխությունը, որի մասին գրողն ինքն էլ ժամանակին հրապարակավ խոստովանել է. ծնված լինելով խորապես կաթոլիկ իդալոգիական ընտանիքում՝ նա երիտասարդ հասակում հրաժարվում է մանկուց դավանած կրոնից և իրեն բողոքական հայտարարում՝ պատճառաբանելով, որ Իդալոգիայի ազգային անկախության ձեռքբերման անհաջողության համար մեղավոր է տեղի հոգևորականությունը: Ջ. Մուրի կրոնական հայացքների վերաբերյալ բավական սպառիչ ու յուրօրինակ բնութագրում է տալիս ամերիկացի գրաքննադատ Ջեյմս Գիբբոնս Հունկերը. «Եւ կաթո-

լիկ է թե ոչ, ես չեմ կարող ասել, բայց եկեղեցին բառացիորեն հետապնդում է կրան: Միսական արարողությունները ճնշում են նրա տեղակալը: Ինչպես մի հիվանդ կին, նա սիրում է հարդարել Տիրոջ շքեղ լիվրեն: Նա մշտապես վերադառնում է կրոնական թեմաներին: Նա տոգորված է, անգամ հալածված այն մտքից, թե Տիրոջ ցանկապատից այն կողմ փրկությունն անհետք է... Նրա երկերի գլխավոր թեմաներից մեկը կրոնն է, մյուսը արվեստը»¹:

Եվ ահա կրոնական այս բավական յուրօրինակ գաղափարների ջատագով մտածողը 1911թ. ճամփորդում է դեպի Երուսաղեմ, իսկ 1916-ին լույս է ընծայում իր «Քիրիթի հեղեղատը, սիրիական պատմություն»² ստվարածավալ վեպը, ուր ընթերցողի աչքի առջև մի շարք մարզինալ հերոսների թվում հայտնվում է նաև Հիսուսի նմանատիպ կերպարը:

Ուշագրավ է, որ մարզինալիզմի որպես էականորեն նոր երևույթի, սահմանմանն առաջին անգամ հանդիպում ենք 1920-ականներին ամերիկացի սոցիոլոգ Ռոբերտ Փարքի գաղափարներում, ուր հեղինակն այս հասկացությունը կիրառում է բնորոշելու համար ներգաղթողների նոր սոցիալական պայմաններին հարմարվելու բարդությունները: «Մարզինալիզմ» եզրույթը ծագել է լատիներեն *margo* բառից, որ թարգմանաբար նշանակում է «ծայր» և բնութագրում է այն «սահմանային» վիճակը, ուր հայտնվում է անհատն իր ապրած որոշակի ժամանակահատվածում տիրապետող հասարակական կամ ավանդական բարքերի հետ բախման արդյունքում: Անտարակույս, վերոհիշյալ հասկացությունն իր դրոշմն է թողել նաև գրականության մեջ, մասնավորապես 20-րդ դարակեսերին պոստմոդեռնիզմի առաջացման արդյունքում: Մարզինալ գրողների շարքում, անշուշտ, ի թիվս այլոց, հիշատակելի են նաև Ուիլյամ Բերրոուզը, Հենրի Միլլերը, Չարլզ Բուկովսկին և այլք:

Ձորջ Մուրի կերտած մարզինալ հերոսները, սակայն, առավել ուշագրավ են, քանի որ ներառում են աստվածաշնչյան կերպարներին և հենց Հիսուս Քրիստոսին:

Գաղափարական տեսակետից «Քիրիթի հեղեղատը, սիրիական պատմություն» վեպը կարելի է բաժանել երկու մասի, առաջին հատվածում ընթերցողի առջև պատկերվում է Հիսուսի մարզինալ կերպարը, որին

¹ Schwab, Arnold, T. "Irish Author and American Critic: George Moore and James Huneker." *Nineteenth-Century Fiction*, 8.4 (Mar., 1954): 256-271.

² *Քիրիթի հեղեղատ*, համաձայն Աստվածաշնչի՝ այս հեղեղատը գտնվում է Հորդանան գետի շինաց, ուր Աստված ուղղորդում է եղիա մարգարեին փրկելով նրան սովից, Գ թագավորաց, ԳԼ, ԺԷ:

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ

ներկայացնում է նմանատիպ մեկ այլ աստվածաշնչյան կերպար՝ Հովսեփ Արիմաթիացին: Վերջինս, ինչպես քաջահայտ է, հոռմեացի պրոկուրատոր Պիղատոսից թույլտվություն ստանալով, խաչից իջեցրել է Փրկչի մարմինը, թաղել իր անձնական դամբարանում, որտեղից էլ ն Աստծո Որդին հարություն է առել: Նշելի է, որ եթե Աստվածաշնչում Արիմաթիացին հիշատակվում է որպես Հիսուսի հետևորդներից մեկը, ապա Ջ. Մուրի կերտած կերպարն ամենուրեք հետևում է Փրկչին: Վերջինս, սակայն, անընդհատ վանում է նրան պատճառաբանելով, որ իրեն հետևելու միակ պայմանը ամեն ինչից, այդ թվում նաև սեփական ծնողներից անվերապահ և լիարժեք հրաժարումն է: Այսպիսով, ընթերցողի համար պարզ է դառնում, որ այս երկու կերպարներն էլ բացարձակապես մարզինալ են, ու այդ տպավորությունն ամբողջանում է նրանց հետագա ճակատագրերի նկարագրությամբ:

Ֆրոդի կրոնական յուրօրինակ գաղափարների լուսապսակը, անտարակույս, վեպի երկրորդ հատվածն է, ուր գուցեև առաջին անգամ ընթերցողը հանդիպում է հարություն առած Հիսուսին, ունկնդրում վերջինիս խոհերն ու սեփական կյանքի վերագնահատումը: Այս հատվածում կերտված է նաև Պողոս առաքյալի գրական դիմանկարը, և ուշագրավ է, որ հիսուսյան վեպի նյութ է դառնում ոչ միայն Փրկչին ինքը, այլև նրա քարոզներով ոգեշնչված մահկանացուն:

Ինչպես ցանկացած գրական ստեղծագործություն, այս վեպը նա արժանացել է բազում գնահատանքների, որոնցից ուշագրավ է ծագումով իտալացի անգլիացի բանաստեղծ, Ջ. Մուրի կենսագիր Հուսեֆու Վուլֆի հետևյալ արժևորումը. «Այս գիրքը մեր ժամանակների մեծագույն եզակի գրական ձեռքբերումն է, գուցե անգլերենով գրված մեծագույն արձակ ստեղծագործությունը»³:

«Քիրիթի հեղեղատը, սիրիական պատմություն» վեպն սկսվում է հեղինակի իր ծանոթուհուն ժամանակի բարձրաշխարհիկ հասարակության մեջ բավական ակնառու տեղ զբաղեցնող Մերի Հանթերին ուղղված նամակով, ուր նա իր երախտագիտությունն է հայտնում 1898-ին Օննոյան տոների առիթով ընծա ստացած Աստվածաշնչի համար, նաև ընդգծում, որ այն օգնել է իրեն բացելու նոր հորիզոններ: Կարելի է ենթադրել, որ վիպասանն ի վերջո գտել է այն կրոնը, որին կցանկանար դավանել, սակայն, վիպական հետագա պատումը վկայում է, որ նրա խոհերն այդ մասին այնքան էլ հստակված չեն: Հետևաբար կարելի է վստահորեն ասել, որ Ջ. Մուրի կերտած Հիսուսը կրում է հեղինակի կրոնական երկբայությունների

³ Wolfe Humbert, George Moore. London 1931, p 90.

կենթև ու իբրև այդպիսին տարբերվում նմանատիպ թեմայով ստեղծագործած այլ գրողների ևույնաևուն հերոսից:

Խնդրո առարկա վեպն սկսվում է Հովսեփ Արիմաթիացու պատանեկան տարիների, վերջինիս կրոնական հայացքների փետրտուցների նկարագրությամբ, երբ պատանին Հիսուսի մասին հորից լսած պատմություններից հետո խռովահույզ հոգով որոշում է մեկուսանալ ու մտորել՝ պարփակվելով սեփական ներաշխարհում: Հենց այդ ժամանակ էլ բազում հաճումներից հետո նրան հաջողվում է հանդիպել Հիսուսին: Ուշագրավ է, որ Հովսեփը նրան հանդիպում է մեկ որպես հովիվ, ապա՝ մուրացկան, անգամ սկզբում ընկալում է սոսկ իբրև հասարակ գյուղացի, սակայն ի վերջո կարողանում է ըմբռնել Հիսուսի բուն ոգին ու ինքնամոռաց հետևում է նրան:

Ինչպես արդեն եղել ենք, վեպը հեշտությամբ կարելի է բաժանել երկու մասի: Առաջին մասում Հիսուս-քարոզիչն է՝ Աստծո Որդին, որը բարության ու սիրո կոչ է անում. «Ով ի միճակի է գնալվել ասողերով ու ծաղիկներով, նա իր սրտում գտնում է Աստծուն, հարևանի դեմքին նայելիս անգամ տեսնում է նրան»⁴. Երկրորդ մասում է Հիսուսը Հովսեփին: Ասել է թե՛ գեղեցկությունն է պայմանավորում սերն առ Աստված: Իսկ եթե կա գեղեցկություն, այսինքն՝ բարին, ապա կա նաև չարիքը, որի մասին Հիսուսն ասում է. «Չարը պետք է արմատախիլ արվի ու կրակը նետվի, իսկ ով կազատվի այդ ամենակույ կրակից, պետք է ինձ հետևի»⁵: Թվում է՝ ընթերցողը մեկ անգամ ևս տեսնում է Աստվածաշնչի էջերից բոլորին քաջածանոթ Հիսուսին, սակայն շուտով այդ խարկանքը ցրվում է, և Մուրի հղացած Հիսուսը վերածվում է հեղինակի կրոնական գաղափարների խոսափողի, ու քանի որ այդ գաղափարները ցարուցրիվ են հենց հեղինակի խոհերում, ուստի նրա կերտած մարզինալ Հիսուսն էլ հակասական մտքեր է արտաբերում:

Ուշագրավ է, որ ժամանակակից քննադատներից ոմանք գրողի այս երկը համարել են հեռացման դրսևորում, սակայն ակնհայտ է, որ այդ հեռացումը վերաբերում է սոսկ նրա գաղափարական դիրքորոշմանը: Այսպես, Մուրի հղացած Հիսուսը, անդրադառնալով հոգևորականության խնդրին, ասում է. «Հոգևորականներն ինձ ասում ու ամբարտավան են կոչում, բայց եթե ես նրանց ամբարտավան եմ թվում, ապա դա նրանից է, որ ևս Աստծո խոսքն եմ տարածում»⁶: Բայց հերթական քարոզներից մեկի ժամանակ արանց դույզն-ինչ վարանելու ևս ի լուր ամենքի հայտարարում

⁴ Moore George, The Brook Kerith, A Syrian story, The Macmillan company, 1930, p 125

⁵ Լույն տեղում, էջ 224:

⁶ Moore George, The Brook Kerith, A Syrian story, 1930, p 224:

է. «Ես ճանաչում եմ ինքս ինձ, բայց չեմ ճանաչում Աստծուն, որ վերևում է, քանի որ ես անսահման է թվում, ոչ էլ բնությունն եմ ճանաչում, որը դուրս է ինձանից, ու թվում է՝ ևույնպես դեպի անսահմանություն է ձգվում, բայց դեպի այն անսահմանությունը, որը Աստծունը չէ»⁷: Այսինքն՝ ես մասամբ ևույնացեցում է Աստծուն և բնությանը, թեպետ, ինչպես հայտնի է Աստվածն է ամենայն զեղեցիկի ու կենդանիի արարիչը և ամբողջականացնելով սեփական մասնատվածության զգացումը՝ իրեն անվանում է «կողջակ երկու անսահմանությունների միջև»⁸: Իսկ այդ կողմացումը ծնում է գաղափարներ, որոնք, ճիշտ է, Աստծո Որդին բարձրաձայնում է, սակայն միաժամանակ այդ արտաբերված խոսքերը թվում են բավական անհարիր Աստծո խոսքը տարածողի համար. «Աստված ո՛չ այստեղ է, ո՛չ էլ այնտեղ, այլ ամենուրեք... բայց արդյոք մենք պե՛տք է տիեզերական կամքը հավաքենք մի պատկերում ու այն Աստված կոչենք, քանի որ այդպես վարվելով՝ արդյոք մենք չե՛նք վերադառնում դեպի մեր տառապանքների սկիզբը: Մենք նորից դառնում ենք խաբկանքի ու ցանկության գոհ: Աստված ու երա երկինքը մեր վաղեմի ծպտված թշնամիներն են: Եւ, ով տեղի է տալիս Աստծո առջև, սկսում է մյուսներին էլ համոզել սիրել Աստծուն, ու շուտով երա սերն առ Աստված դրդում է երան արտաբերել դաժան բառեր և կատարել անողոր արարքներ: Այլ կերպ չի էլ կարող լինել, քանի որ Աստված ցանկություն է, իսկ ես, ով տուրք է տալիս ցանկությանը, մեղքի մեջ է ընկնում: Որպեսզի լինենք առանց մեղքի, պետք է լինենք առանց Աստծո»⁹:

Ինքնին հասկանալի ու ակնհայտ է, որ Ջ. Մուրի կերտած Հիսուսը մարզինալի ցայտուն դրսևորում է. մի կողմից ես քարոզում է Աստծո խոսքը, որի պատճառով և խաչ է բարձրանում, մյուս կողմից՝ հերքում է ևույն Աստծո գոյությունն ու իրեն հետևողներին էլ պարզապես զրկում է սեփական կյանքի հնարավորությունից և պահանջում անմնացող նվիրում: Եւ վստահաբար հայտարարում է, որ երկիր գալուց առաջ եղել է Աստծո հետ մի ամբողջություն, ու քանի որ մարդիկ Աստծո դեմ ըմբոստացած հրեշտակներ են, որոնց ես երկիր է նետել, ապա ինքը մարդկային կերպարանք է ստացել ու ներքև իջել, որպեսզի փրկի մարդկությանը մեղքերից, և ուրախությամբ ընդունում է իրեն բաժին ընկած գոհաբերությունը, քանի որ մահից հետո միանալու է Հորն ու դառնալու մի անբաժանելի ամբողջություն: Ուշագրավ է նաև, որ Հիսուսն անընդհատ խոսում է մոտալուտ Ահեղ դատաստանի մասին, վստահաբար

⁷ Լույն տեղում, էջ 354:

⁸ Լույն տեղում:

⁹ Լույն տեղում, էջ 366:

հարտարարում իր երկրորդ գալստյան մասին, երբ ես հայտնվելու է մարդկությանը Հոր, այսինքն՝ Աստծո կողքին՝ հրե կառքում եստած, մի ձեռքում առք մուսում՝ քան, իսկ ձեկներին՝ բացված Դատաստանագիրքը: Ակնհայտ է որ, ի տարբերություն այլ գրողների կերտած Հիսուսի, Ջ. Մուրը բնավ չի պատկերում խաղաղության սերմանող Փրկչին:

Վեսլի երկրորդ մասում ընթերցողի այքի առջև կանգնում է իտալությունից ազատված Հիսուսը, որը վերադառնում է մենաստան, վերսկսում իր հովվությունն ու ապրում հովվերգական կյանքով մինչև այն պահը, երբ հայտնվում է Պողոս առաքյալն ու մենաստանի բնակիչներին պատմում Դամասկոսի ճանապարհին իրեն հայտնված տեսիլը. Հիսուսը ետրոնվել էր նրան ու հորդորել քարոզել իր ուսմունքը: Այս անհասկանալի պատրանքն ստիպում է 55-ամյա Հիսուսին պատմել ամբողջ եղելությունը, որի իսկությունը սարսափ է պատճառում ունկնդիրներին:

Դարզվում է՝ մենաստանում ապրող Հիսուսը, որին մանուկ հասակից այստեղ էր բերել հայրը՝ հյուսն Հովսեփը, հովվություն անելիս հանդիպում է Հովհաննես անունով մի ճգնավորի (ի դեպ, խոսքն այստեղ, անշուշտ, Հովհաննես Մկրտչի մասին է, որը, ի տարբերություն աստվածաշնչյան նաևրահայտ մեկնաբանության, թե Հիսուսի մորաքրոջ որդին է, մի ետաբարակ ճգնավոր է), հրապուրվում է նրա քարոզներով ու որոշում իր բաժնը տարածել աշխարհով մեկ: Բայց երբ պկանատես է լինում իր տարածած ուսմունքի անհեթեթ հետևանքներին (մարդիկ պատմում էին Հիսուսի հարության մասին, մինչդեռ իրականում ես դեռ չէր մահացել, այլ սոսկ տանջվում էր խաչի վրա, իսկ Հովսեփ Արիմաթիացին էլ, դրդված վերջինիս հանդեպ անհասկանալիորեն անսահման սիրուց, օգտագործում է Պիղատոսի հետ իր մտերմությունը, թույլտվություն է ստանում ու Հիսուսին տեղափոխում իր դամբարանը, ետյն Արիմաթիացին էլ հենց նախքան հեռանալը հասկանում է, որ Հիսուսը դեռևս ողջ է, գաղտնաբար նրան տեղափոխում է իր տուն, աղախնի օգնությամբ խնամում ու ապարհնված Հիսուսը վերադառնում է մենաստան), ազդարարում է. «Բայց այդ օրերին իմ կիրքն այնքան մեծ էր, որ ես չէի հասկանում, որ իմ քարոզները սոսկ աստվածանարգություն էին, քանի որ Աստված ստեղծել է աշխարհը մեզ համար, որպեսզի մենք ապրենք այնտեղ ու սեր է դրել մեր սրտերում, քանի որ ցանկանում է, որ սիրենք... որովհետև ես ցանկանում է վայելել այդ սերը»¹⁰:

Ավելին, թվացյալ հարություն առած Հիսուսը պնդում է, որ Աստված փրկել է իրեն խաչից, որպեսզի հնարավորություն տա մեղքերը քավել, քանի

¹⁰ Moore George, The Brook Kerith, A Syrian story, p 447.

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ

որ իր քարոզներով ինքը մոլորեցրել է մարդկանց, իսկ իրեն Աստուծո Որդի հայտարարելով մեղք է գործել հենց Բարձրյալի առաջ: Վեպի ավարտին Հիսուսը որոշում է գնալ Երուսաղեմ ու բացահայտել ամբողջ ճշմարտությունը, ցրել իր կեղծ հարության մասին պատմությունների առաջացրած հետևանքներն ու ընդունել սուտ քարոզիչ լինելու մեղքը: Ուրեմն ես բռնում է այս ճամփան՝ իբրև ուղեկից ունենալով Պողոս առաքյալին, որին նման ճշմարտությունը նետել էր հուսահատության գիրկը, այնուամենայնիվ այս ճամփորդության վերջաբանը մնում է անկախ:

Այսպիսով, Ջորջ Մուրի «Քիրիթի հեղեղատը. սիրիական պատմություն» վեպը դիտարկելիս ակնհայտ է Հիսուսի բացառապես մարդկային սկարագրի գերակայությունը, որն էլ նրան դարձնում է մարզինալ կերպար, քանի որ մղում է տարամետ խոհերի ու արարքների:

2. Ա. Շարուրյան

Մարզինալ կերպարը Ջորջ Մուրի «Քիրիթի հեղեղատը. սիրիական պատմություն» վեպում Անվտանգում

Հողվածը եվրոպացի է անգլիացի նշանավոր գրող Ջորջ Մուրի «Քիրիթի հեղեղատը. սիրիական պատմություն» վեպում անկա մարզինալ կերպարի քննությանը: Մասնավորապես անդրադարձ է կատարվել Հիսուսի կերպարին, որի խոհերի և արարքների հակասականությունը բացահայտում է մարզինալիզմի ցայտուն հատկանիշները: Ուշագրավ է նաև, որ գուցե առաջին անգամ հիսուսյան վեպերի նյութ է դառնում հարություն առած ու իբրև սովորական մահկանացու իր կյանքն ապրող Փրկիչը: Բացի այդ՝ հեղինակը վարպետորեն պատկերում է նաև Հիսուսի ներքին երկվությունը, որը վերջինիս վերածում է բացառապես մարդկային, այլ ոչ թե աստվածային կերպարի:

А. А. Шарурия

Образ маргинала в повести Джорджа Мура «Ручей Керит. сирийская история»

Резюме

Статья посвящена анализу образа маргинала из повести знаменитого английского писателя Джорджа Мура «Ручей Керит. сирийская история». В частности, мы обратились к образу Иисуса, противоречивость мыслей и поступков которого раскрывает выраженные признаки маргинализма. Примечательно также, что, возможно, впервые материалом для иисусовских повестей становится Спаситель, воскресший и проживающий свою жизнь как простой смертный. Помимо этого, автор мастерски отображает также

внутреннее раздвоение Иисуса, делающее его образ исключительно человеческим, а не божественным.

H. A. Sharuryan

**The Character of Marginal in the Novel "The Brook Kerith, a Syrian story"
by George Moore**

Summary

The article is dedicated to the analysis of the marginal character in the novel "The Brook Kerith, a Syrian story" by famous English writer George Moore. It particularly turns to the character of Jesus the contradiction in whose thoughts and deeds reveals the vivid features of marginalism. It is noteworthy, that maybe for the first time the theme of Jesus novels is the Savior, who after his resurrection has become a simple man. Besides, the author skillfully depicts the internal duality of Jesus, which turns him into a human and not a divine character.

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ, ՄԱՐԳՈՒՇ ՄԻՐՈՒՄՅԱՆ Լեզվաբանական տերմինների ուսումնական բառարանի կազմման սկզբունքները	3
К проблеме синонимической соотнесенности соматических фразеологизмов (сопоставительный анализ)	11
ԱՇԽԵՆ ՅՈՒՉԲԱՇՅԱՆ Հայոց լեզվի ուսումնասանագիտական պրակտիկայի մի քանի առանձնահատկություններ	17
ԱՆԱՀԻՏ ՅՈՒՉԲԱՇՅԱՆ Պ. Մևակի «Ամանեջ» վեպի լեզվաոճական առանձնահատկությունները	26
ՌԻՏԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ Տեղաշարժերը Գեղամավանի խոսվածքում	35
ՄԻՐԱՐՓԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Դերանունը որպես սերող հիմք հայերենի և անգլերենի համադրական եվ վերլուծական բաղադրություններում	47
ՍՈՒՄԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ Լեհական փոխառությունները միջին հայերենում	55
ՀՈՒՓՍԻՄԵ ԹՈՐՈՍՅԱՆ Հատկացուցիչ-հատկացյալ կապակցությունը պարսկերենում և արդի հայերենում	63

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՏԻՆ ԳԻՒԱՎՅԱՆ, ՄԵԼԻՆԵ ԳԻՒԱՎՅԱՆ Համո Սահյանի չափածո մատյանի վերջին էջերը	69
ՌՈՒՋԱՆ ԴԱՋԱՐՅԱՆ Ստեփան Զորյանի «Մի կյանքի պատմություն» վեպը անգլիալեզու գրականության աղբյուրներում	76
ՀԱՅԿԱՆՈՒՇ ՇԱՐՈՒՐՅԱՆ Մարգինալի կերպարը Զորջ Մուրի «Քիրիթի հեղեղատը. սիրիական պատմություն» վեպում	90
ԼՈՒՄԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ Միքայել Նալբանդյանի «Երկու տող» պամֆլետը	98
ՎԱՐԴՈՒՆԻ ԴԱՎԹՅԱՆ Մովի, նավի, լեռան խորհրդանշական պատկերները Կոստան Զարյանի երկերում	104
ՍԻՐՎԱԴՐ ԱՍՐՅԱՆ Ավանդական ու նորարարականը Ռուբեն Հովսեփյանի փոքր արձակում	114
ԳՐԵՏԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ Նարեկացու և Մեծարենցի քնարական հերոսների դրաման, գրական առեղծությունները	120
ԱՆԱՆԻՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Պետրոս Մարկի կերպարը կերպարը Կոստան Զարյանի «Նաը լերան վրայ» վեպում	129
ՄԱՐԻՆԵ ՄԿՏՉՅԱՆ Արցախը Զորի Բալայանի հրապարակախոսական արձակում	136

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ

ԱՐՏՈՒՇ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ
Իսահակյանի «Լիլիթը» հին արևելյան գրույցների ու
եվրոպական գրականության համատեքստում 141

ԴԻԱՆԱ ՄՆԱՑԱԿԱՆՑԱՆ
Գորգեն Խանջյանի անավարտ պատույրը՝ շարժասանդուղքից
մինչև գնացք 155

ԳՐԻԳՈՐ ՇԱՇԻԿՅԱՆ
Ժամանակի պատկերումը Հրանտ Մաթևոսյանի «Մեծանոր»
եսեում 166

ՆԻՆԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Բառը ձգտում է հավիտենության 176

ՆԱՐԻՆԵ ՇԱՀԱԳՅԱՆ
Պանդխտության երգերը «Հազար ու մի խաղ» ժողովածուում 181

ՄՇԱԿՈՒՅԹ

ՄԻԼՎԻԱ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ
Բնակարի ժանրը խաչատուր Եսայանի արվեստում 190

ՍՅՈՒԶԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Խճանկարչության զարգացման ընթացքը
/Նախաքրիստոնեական շրջան/ 201

ՄԵՐ ՀՈՐԵԼՅԱՐՆԵՐԸ

ԼԱՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Վարդապետական թոսյան - 90 206